ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՔՆՆՉԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ք. Երևան, Մամիկոնյանց 46/5

«21» 08 2023 թ. N 06/274691-23

«Առավոտ օրաթերթ» ՍՊ ընկերության
լրագրող Արմենակ Դավթյանին
(էլ. հասցե՝ armendavtyan7213@gmail.com)

ՀՀ քննչական կոմիտեի նախագահին հասցեագրած Ձեր հարցմանն ի պատասխան հայտնում եմ, որ «Շինպլյուս» ՍՊ ընկերության և «Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ»-ի լիազորված անձանց, ինչպես նաև համապատասխան պաշտոնատար անձանց կողմից առերևույթ կատարված հանցանքի վերաբերյալ ՀՀ ՆԳՆ ոստիկանության Վայոց ձորի մարզային վարչությունից ստացված հաղորդման առթիվ ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում ՀՀ նախկին՝ (2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված և 2022 թվականի հուլիսի 1-ին ուժը կորցրած) քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի՝ 3-րդ մասի 3-րդ կետի, 315-րդ հոդվածի 2-րդ մասի և 325-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով նախաձեռնված քրեական վարույթը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 483-րդ հոդվածի 17-րդ մասի 6-րդ կետի համաձայն ուղարկվել է ՀՀ քննչական կոմիտե:

07.08.2023թ. քրեական վարույթը ստացվել է ՀՀ քննչական կոմիտեի Վայոց ձորի մարզային քննչական վարչությունում: Քրեական վարույթով որևէ անձի նկատմամբ հանրային քրեական հետապնդում չի հարուցվել: Կատարվում է նախաքննություն:

Պետ, արդարադատության
առաջին դասի խորհրդական Կ.Շառոյան